

## ՍԻՄԵՅՈՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱՐ ՀԵՐԱԿԼ ԱՐԻՍՏԻՆ

Թուղթ գրեաց սրբազան վեհն առ Արքայն Հերակլ ի Թիֆլիզ, ի պատասխանի երկց թղթոց նորին որք քան զալս լառաջ և այժմ եկին: Որոց զմինն գրեալ էր վասն երկուց արանց որոց մինն էր լոյն և մինն հալ, զորս լղեալ էր երթալ ի լնգիպոսս, և գրեալ էր սրբազան վեհին ընդ հաւատարմի ուղևորել զնոսս լալս երկրէ, զորս և ուղարկեցաք ի Բալաղիտ առ տէր Վահանն՝ լղել անտի դէպի Մուշ, զորս նա լղեալ էր: Իսկ զերկրորդ գիրն գրեալ էր ընդ Նեստորական Սալուսն, և ընդ եղզի Նաբի Աղալին, որք քանիցս երթեկս առնէին առ նա, և կամէին բազում տամբք զալ՝ և երթալ առ նա ի Վրաստուն: Որոց սակս գրեալ էր ուղևորել աստի, զորս և ուղևորեաց: Իսկ զերրորդն լղեալ էր աստ ի ձեռն թիֆլիզեցի պարոն Մէհրապին՝ որ երթալս ի Խօլ, որով խնդրեալ էր զորպիսութիւնս սրբազան վեհին: Եւ զոր ինչ լառաջ խնդրեալ էր ի նմանէ սրբազան վեհն, վասն Յովսէփ վարդապետի եղբարցն՝ որոց աղագաւ գրէր զամենն ի Մէհրապէն իմանալ: Եւ վասն նոյն Յովսէփ վարդապետի եղբարցն զարձեալ զնոյն խոստմունսն զորս լառաջ, այժմ ևս խոստացեալ էր, թէ վասն խաթեր քոլ զալն էլն տալոց եմ նոցա, բայց տակաւին ունիմ ես զնալելիս: Թող ժամանակ ինչ ևս մնասցէ: Եւ այս Գ թղթոցս զպատասխանիսն այժմ միանգամայն գրեաց նմա, և ծանոց զկատարումն տալն գրեցելոցն, և սակաւ մի զիւրոց որպիսութեանցն. զորոց զլիապէսն Մէհրապն գրեալ գնաց ի Խօլ: Զթուղթ մի ևս վրացերէն էր գրեալ առ սրբազան վեհն, և զարբոյն Կիւրղի Աղէքսանդրացոյ զանձուց գիրքն խնդրեալ աղերսանօք: Զի կամէր թարգմանել տալ լիւրեանց լեզուն: Զի անդ մինն գոյր որ ի սրբոյ Աթոռոյս միաբան և տեղուն Առաջնորդ Աւետիգ վարդապետէն էր մնացեալ, զի թէ զնորին գրեանսն, և եթէ զԹիֆլիզեցի Զաքարիա վարդապետի գրեանսն, նոքա զաւթեցին: Բայց այն գրէին թէ սխալագիր է և անարհեստ գրեալ, և պակաս, լորմէն չէ լինի հասկացումն բանի ինչ, զի և թարգմանեսցի: Գրէր և զաղերսանս, թէ ուր գիտես իսկ զի լուսաւորութիւն ազգիս մերոյ ի ծէնչ է լեալ, եւ որ ինչ զիտութիւնք են ի մից ի ձեր վորդապետացն սերմանեցան յազգս մեր: Արդ մի լաղաղերս այժմոյս ևս զն առնել ազգիս մերում զնոյնպիսի բարերարու-

թիւնս, զի և քեզ լիցի պարծանք, և քոյդ անուն ևս լիշեսցի լապագալս: Եւ խոստանալր ևս երդմամբ՝ թէ յորժամ թարգմանեցուցից զգիրքն, ալ անդրէն լեռս ևմ լղելոց ի սուրբ Աթոռ: Եւ սրբազան վեհն սակս այսչափ նորին աղերսանացն չկարաց բացասել զխնդիրսն, ալ ըստ խնդրոյն լղեաց առ նա զգիրսն դանձուց, ընդ որում էր և Պարապմանցն նոյնոյ սըրբոյն Կիւրղի: Զոր կարմիր կնքով գրեանցն սրբոյ աթոռոյս կնքեցաք ի հինգ տեղիս, և գրեցաք ևս առ ընթեր կարմիր կնքոցն՝ կարմուռ, թէ գիրքս այս սրբոյ Էջմիածնի է, և ապա լղեցաք: Եւ վասն թուղթ ևս վրացերէն գրեաց առ նա սրբազան վեհն ի պատասխանի նոյն լիշեալ վրացերէն թըղթոյն, թէ անա լղեցի ըստ խնդրոյդ զգիրքն, բաց վասն խրթնութեան չհաւատամ թէ կարիցեն թարգմանել լալդր ուղղապէս: Ալ չհասկացեալսն աղարտելոց են ի հարկէ, և զոր ինչ ինքեանք հաճեսցին դալն են գրելոց: Որով գիրքն ապականի, անուն հեղինակին աղճատի, և մեղք ևս լինի: զի սուրբ գիրք է, և վասն հաւատոյ վիճումն ընդդէմ արիանոսաց՝ և Մակեդոնի՝ և ալ հերձուածոց: Ուստի խնդրեմ ասէ Արքայէդ զի պատուիրեսցես սաստկապէս թարգմանողացն, և վերահասու ևս լիցիս: Զի լաւ հասկացցին, և ապա թարգմանեսցեն: Իսկ զոր ինչ սչ հասկացցին ասէ, թող գրեալ ծանուցեն մեզ, և մեք զնոյն տեղին պարզեալ՝ գրեսցուք զոցս, և ապա թարգմանեսցեն: Եւ լեռ թարգմանելոյն՝ խնդրեաց անդրէն լեռս լղել աստ զգիրքն՝ որպէս և խոստանալր: Ալ ևս ի սոյն միջոցի Որդի Արքային շերակլալ Գեորկին Միրզայն, զժուարացեալ էր ի մեր խանէն վասն պատճառաց ինչ: Ուստի՝ զԹիֆլիզեցի Մոնթոյնց Վոլսէփն լղեալ էր առ խանն, և ղկիրս սրտի իւրոյ ասացեալ էր նմա ասել խանին: Ուստի՝ զգիր մի ևս առ սրբազան վեհն էր գրեալ այսր աղազաւ: Վասնորոյ զթուղթ ևս տաճկերէն առ նա գրեաց սրբազան վեհն, մինչ Յովսէփն գնաց առ խանն և դարձաւ, ծանուցանելով նմա զգալն Յովսէփին, և ասելն զբանսն իւր խանին, և ալ սիրոյ բանք: Զի սչ նա էր գրեալ ի թղթոջն զմիտսն, և ոչ սրբազան վեհն գրեաց: Զվերոյ լիշեալ գրեանսն Արքային, և զգիրքն դանձուց և Մէհրապի գրեալ թուղթն զոր ի վերն լիշեցաք, նա և զանձանօթ իմն պատկեր ծովային մեծ և նորատես գազանի, (զոր ի Բաղդատու լղեալ էին աստ, և Արքայն լուեալ և խնդրեալ էր), լղեցաք ընդ նոյն լիշեալ Թիֆլիզեցի Մոնթոյնց Յովսէփին: Գեկտ. 1. 1776: